Հավելված
ՀՀ վարչապետի 2018 թ.
փետրվարի 22 -ի N 168 - Ա
որոշման

# Ց Ա Ն Կ

## «ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| NN ը/կ | Միջոցառման անվանումը | Պատասխանատու պետական կառավարման մարմնի անվանումը | Իրավական ակտի նախագիծը ներկայացնելու ժամկետը | Ֆինանսական ապահովման աղբյուրը | Օրենքի հոդվածը, մասը (կետը) |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1. | «Գիտության և կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու կարգը և պայմանները սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 29-ի N 1394-Ն և 2015 թվականի փետրվարի 5-ի N 117-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հունվարի 13-ի N 15 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | ՀՀ պաշտպանության նախարարություն | 2018 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդված, 5-րդ մաս |
| 2. | «Մշակույթի և արվեստի բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու կարգը և պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | ՀՀ պաշտպանության նախարարություն | 2018 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդված, 5-րդ մաս |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| 3. | «Սպորտի բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու կարգը և պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | ՀՀ պաշտպանության նախարարություն | 2018 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդված, 5-րդ մաս |
| 4. | «Նպատակային ուսումնառության համար քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու և տրված տարկետումը դադարեցնելու պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | ՀՀ պաշտպանության նախարարություն | 2018 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդված, 4-րդ մաս |
| 5. | «Բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1994 թվականի մայիսի 19-ի N 232 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | ՀՀ պաշտպանության նախարարություն | 2018 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդված, 2-րդ մաս |
| 6. | «Քաղաքացուն բացառիկ դեպքերում պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | ՀՀ պաշտպանության նախարարություն | 2018 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդված, 5-րդ մաս |
| 7. | «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններում պարտադիր զինվորական ծառայություն անցնելու պայմանագիր կնքած շարքային կազմի ժամկետային պարտադիր զինծառայողներին օրենքով սահմանված հիմքերով զինվորական ծառայությունից արձակելիս հաշվարկվող պատվոճարի չափը, տալու կարգը և պատվոճարի տնօրինման ուղղությունները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | ՀՀ պաշտպանության նախարարություն | 2018 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդված, 4-րդ մաս |
| 8. | «Ռազմաուսումնական հաստատությունների ընդունելության | ՀՀ պաշտպանության | 2018 թ. | Ֆինանսա- | «Զինվորական ծառայության և |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| | կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի N 525-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | նախարարություն | մարտի 2-րդ տասնօրյակ | վորում չի պահանջվում: | զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդված, 5-րդ մաս |
| 9. | «Քաղաքացու առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության, հետազոտման և փորձաքննության ուղեգրման կարգերը, հետազոտում և բժշկական փորձաքննություն իրականացնող մարմինները և դրանց գործունեության կարգը, փորձաքննության եզրակացությունների ձևերը, բժշկական հետազոտությունների և բժշկական հաստատությունների ցանկերը, իրականացված ծառայությունների դիմաց փոխհատուցման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | ՀՀ պաշտպանության նախարարություն | 2018 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդված, 2-րդ մաս |
| 10. | «Զինվորական ծառայության համար քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկը, ինչպես նաև քաղաքացու կամ զինծառայողի առողջական վիճակին հակացուցված զինվորական ծառայության պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | ՀՀ պաշտպանության նախարարություն | 2018 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդված, 2-րդ մաս |
| 11. | «Սպայական կազմի պայմանագրային զինծառայողների կողմից բնակարան կամ բնակելի տուն ձեռք բերելու կամ բնակելի տուն կառուցելու նպատակով մատչելի և արտոնյալ պայմաններով երկարաժամկետ հիփոթեքային վարկավորման պետական նպատակային ծրագրերից օգտվելու կարգը և պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | ՀՀ պաշտպանության նախարարություն | 2018 թ. մարտի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդված, 2-րդ մաս |
| 12. | «Շարքային կազմի պայմանագրային զինծառայողներին սահմանային տարիքը լրանալու դեպքում զինվորական ծառայության մեջ գտնվելու ժամկետը երկարաձգելու հնարավորություն ընձեռող մասնագիտությունների ցանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ | ՀՀ պաշտպանության նախարարություն | 2018 թ. ապրիլի 1-ին տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդված, 5-րդ մաս |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| | ներկայացնելը | | | | |
| 13. | «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 17-ի N 1654-Ն, 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն, 2011 թվականի մայիսի 5-ի N 668-Ն, 2012 թվականի ապրիլի 26-ի N 597-Ն, 2014 թվականի հուլիսի 3-ի N 712-Ն, 2014 թվականի սեպտեմբերի 25-ի N 1119-Ն, 2017 թվականի ապրիլի 6-ի N 347-Ն, 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1016-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | ՀՀ պաշտպանության նախարարություն | 2018 թ. ապրիլի 1-ին տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդված, 1-ին մաս<br>44-րդ հոդված, 2-րդ մաս<br>54-րդ հոդված, 3-րդ մաս<br>61-րդ հոդված, 3-րդ մաս, 18-րդ մաս<br>63-րդ հոդված, 1-ին, 4-րդ և 13-րդ մասեր<br>64-րդ հոդված, 2-րդ մաս<br>64-րդ հոդված, 3-րդ մաս<br>65-րդ հոդված, 3-րդ մաս<br>67-րդ հոդված<br>70-րդ հոդված, 7-րդ մաս |
| 14. | «Պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումների կազմակերպման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | ՀՀ պաշտպանության նախարարություն | 2018 թ. ապրիլի 2-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդված, 6-րդ մաս |
| 15. | «Քաղաքացիական բժշկական հաստատություններում զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների բժշկական օգնության և սպասարկման, ինչպես նաև բժշկական ցուցումների առկայության դեպքում զինծառայողների անվճար առողջարանային բուժման կարգը և պայմանները սահմանելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունիսի 20-ի N 553 և 2013 թվականի հուլիսի 25-ի N 806-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | ՀՀ պաշտպանության նախարարություն | 2018 թ. ապրիլի 2-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդված, 2-րդ և 4-րդ մասեր |
| 16. | «Հայաստանի Հանրապետության տարածքում արձակուրդի անցկացման վայր մեկնելիս և արձակուրդի վայրից վերադառնալիս զինծառայողի տրանսպորտային ծախսերը փոխհատուցելու | ՀՀ պաշտպանության նախարարություն | 2018 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 66-րդ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| | կարգը և պայմանները, զինվորական ծառայությունից արձակվելիս չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց զինծառայողին տրվող փոխհատուցման չափը սահմանելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի նոյեմբերի 27-ի N 778 և 2004 թվականի մայիսի 6-ի N 886-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | | | | հոդված, 2-րդ մաս<br>61-րդ հոդված, 16-րդ մաս |
| 17. | «Պայմանագրային զինծառայողին ծառայության վայրում ծառայողական բնակարանով չապահովվելու դեպքում այլ բնակելի տարածություն վարձակալելու դիմաց դրամական փոխհատուցում վճարելու կարգը և չափերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | ՀՀ պաշտպանության նախարարություն | 2018 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդված, 1-ին մաս |
| 18. | «Ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ կամ զինվորական ծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքին դրամական աջակցություն տալու կարգը և դրամական աջակցության չափերը, զինծառայողի հուղարկավորության, գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման հետ կապված ծախսերը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցելու կարգը և չափերը, հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողներին, ծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամներին տրվող միանվագ դրամական օգնության չափը, վճարման կարգը և պայմանները սահմանելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 18-ի N 341 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | ՀՀ պաշտպանության նախարարություն | 2018 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի<br>68-րդ հոդված, 1-ին մաս<br>69-րդ հոդված, 1-ին մաս<br>63-րդ հոդված, 10-րդ և 13-րդ մասեր |
| 19. | «Զինվորական ծառայության պաշտոնների առանձին խմբերում ընդգրկվող հիմնական պաշտոնների, զինվորական ծառայության բարձրագույն հրամանատարական և բարձրագույն սպայական հիմնական պաշտոններին հավասարեցված պաշտոնների, ինչպես | ՀՀ պաշտպանության նախարարություն | 2018 թ. մայիսի 2-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդված, 4-րդ և 5-րդ մասեր |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| | նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության հանրապետական գործադիր մարմինների համակարգերում զինվորական ծառայության հիմնական պաշտոնների, քրեակատարողական և փրկարարական ծառայությունների հիմնական պաշտոնների միջև համապատասխանությունը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | | | | |
| 20. | «Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցած անձանց մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ տալու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | ՀՀ պաշտպանության նախարարություն | 2018 թ. մայիսի 2-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդված, 3-րդ մաս |
| 21. | «Հանրակրթական դպրոցներում, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում նախազորակոչային պատրաստության կազմակերպման և անցկացման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 25-ի N 532 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը | ՀՀ պաշտպանության նախարարություն | 2018 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդված, 1-ին մաս |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ